

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ**  
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի  
ծննդյան 80-ամյակի առթիվ)



Լրացավ մեծանուն գիտնական, բանագետ, «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի ութսուն տարին: Վաստակաշատ տարիների բարձունքից գիտնականն այսօր հանգիստ ու անվարան կարող է հայացք գցել իր անցած ճանապարհին և հպարտանալ այն նվաճումների համար, որոնցով մեծապես խթանել է հայագիտության, մասնավորապես նրա կարևորագույն ճյուղերից մեկի՝ բանագիտության զարգացումը:

Ս. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների սահմանները գրեթե անպարագիծ են. դրանք ընդգրկում են վիպական բանահյուսության մեծ ու փոքր ժանրերը, հատկապես հայոց ազգային դրամատուրգիան, հմայական բանահյուսության տարատեսակները (անեծք-օրհնանքներ, երգումներ, հմայական աղոթքներ), բանաձևային բանահյուսության նմուշները, առասպելաբանությունը, հայ հին գրականությունը, հայագիտության պատմությունը, միջազգային բանագիտական մտքի համադրմամբ՝ արևելագիտական, գրական ու բանահյուսական փոխառնչությունները:

Նրա գործունեության արդյունքները հիմնականում ամփոփված են առանձին մենագրություններում և մեծածավալ աշխատություններում, որոնք արժանացել են գիտական և հասարակական համընդհանուր ճանաչման:

Ս. Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ Աշոցքի (նախկին Ղուկասյան) շրջանի Ղազանչի գյուղում: Մինչև հինգերորդ դասարանը սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1940 թ. Հարությունյան ընտանիքը տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ և նա ավարտել է ուսումը քաղաքի N 26 արական հայկական դպրոցում: Բարձրագույն կրթություն ստանալու ցանկությամբ ուսումնաստենչ պատանին տեղափոխվել է Երևան: 1947 թ. Ս. Հարությունյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը (պարսկերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ), որն ավարտել է 1952 թ.: Ուսումնառության տարիներին անձնադիր ընթերցասիրությամբ նա հղկել է ապագա հայագետի ու ժողովրդագետի իր ճաշակը, գալիք բեղուն աշխատանքի համար մշակել գիտական կայուն սկզբունքներ: Եվ պատահական չէ, որ Ս. Հարությունյանը համալսարանական տարիներին եղել է ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի և մեծագույն բանաստեղծ Ավ. Իսահակյանի անվան կրթաթոշակառու:

1956 թ. Ս. Հարությունյանն ընդունվել է Հայաստանի ԳԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սասպիրանտուրան՝ «Հայ ժողովրդական

բանահյուսություն» մասնագիտությամբ: Բանագիտական գործունեությունը նա սկսել է ակադեմիկոս Ա. Ղանալանյանի ղեկավարությամբ:

1959 թ. ավարտելով ասպիրանտուրան՝ նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նրա «Հայ ժողովրդական հանելուկներ» (1960 թ.) մենագրությամբ և նույնանուն համահավաք ժողովածուով (1965 թ.) հայ բանասիրության մեջ հիմք է դրվել հանելուկների գիտական ուսմունքին և դրանց բնագրերի գիտական հրատարակությանը: Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններից հավաքած, պատմա-մշակութաբանական առաջնակարգ մեթոդով համակարգված այս աշխատություններին բնորոշ է յուրահատկությունների՝ ծագման, ակունքների, առասպելական շերտերի բացահայտումը:

1971 թ. Ս. Հարությունյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» թեմայով: Մեծանուն հայագետը մշտապես եղել է Ս. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում (հինգ հոդված, մեկ ծավալուն մենագրություն): Ս. Աբեղյանի երկերի VII և VIII հատորների (1975, 1985 թթ. կազմումը, խմբագրումը և ծանոթագրություն-ը՝ Ս. Հարությունյանի) և Ս. Աբեղյանի երկերի Ա հատորում զետեղված՝ Ս. Հարությունյանի հեղինակությամբ «Армянская эпическая словестность» վերնագրով ռուսերեն հոդվածում (1966 թ.), որտեղ մատնանշվել են հայ վիպական բանահյուսության վերաբերյալ Ս. Հարությունյանի գիտական սկզբունքները:

1973 թ., երբ լրանում էր «Մասնա ծոեր» հերոսավեպի՝ Գ. Սրվանձոյանցի հայտնաբերած առաջին պատումի 100-ամյակը, Ս. Հարությունյանը, նախաձեռնում և ղեկավարում է գիտական նպատակային արշավախումբ՝ Հայաստանի տարբեր շրջաններից գրի առնելով հերոսավեպի 81 նոր պատումներ, որոնք քանակով գերազանցում են մինչ այդ գրառածները և կարևոր ներդրում են հայ էպոսագիտության մեջ: Դրանց մի ընտիր մասը լույս է տեսել երկու մեծադիր՝ գիտական հրատարակության Գ (1979 թ.) և Դ (1999 թ.) հատորներով՝ Ա. Սահակյանի հեղինակակցությամբ: Շարունակելով և հարստացնելով Գ. Սրվան-ձրոյանցի, Ս. Աբեղյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի վիպագիտական ուսմունքը Ս. Հարությունյանը դառնում է հայ մեծ մտավորականների արժանի հետևորդը<sup>1</sup>:

1975 թ. հրատարակված «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» արժեքավոր մենագրությամբ Ս. Հարությունյանը առաջին անգամ հետազոտել է բանահյուսական հիշյալ տեսակների ժանրային, տիպաբանական, կառուցվածքային հատկանիշները, հնագույն գրավոր ու բանավոր կիրառությունները և հիմք դրել անեծքների և օրհնանքների գիտական համակողմանի տեսությանը: Եվ տարիներ անց կազմել ու հրատարակել է «Հայ հմայական ու ժողովրդական աղոթքների» (2006 թ.) համահավաք գիտական բնագիրը, որն ընդգրկում է ավելի քան 460 աղոթքներ՝ 760 տարբերակներով, օժտել է ծանրակշիռ ծանոթագրություններով, ժանրի բնութագրման տեսական հետազոտությամբ, սահմանել հայ բանագիտության մեջ հմայության և հմայական բանա-հյուսության տեսությունը:

Մոսկվայում, «Советская этнография» ամսագրում 1975 և 1981 թթ. ռուսերեն լեզվով հրատարակվել են երկու հոդված, որոնցից մեկը թարգմանվել է ֆրանսերեն և հրատարակվել Փարիզում 1975-1976 թթ.՝ «Revue des Etudes Armeniens» ամսագրում: Մոսկվայում «Мифы народов

<sup>1</sup> Հայագիտության անվանի դեմքերին նվիրված՝ Ս. Հարությունյանի հոդվածների աղբյուրները տե՛ս Սարգիս Բարդուղիմևոսի Հարությունյան. կենսամատենագիտություն (նրաժողովրդը և մատենագիտությունը՝ Ավարդ Ղազիյանի), Ե., 2003:

мира» երկհատոր հանրագիտարանում (1981, 1982 թթ.) և «*Мифологический словарь*»-ում (1990 թ.) տպագրվել են նրա՝ հայ առասպելաբանությանը նվիրված շուրջ 50 հոդվածներ, որոնք թարգմանվել են գերմաներեն, հունգարերեն և հրատարակվել են Բեռլինում ու Բուդապեշտում՝ հեղինակին բերելով համաշխարհային ճանաչում: 1997 թ. Թեհրանում «*Iran and Caucasus*» հանդեսում անգլերեն լեզվով հրատարակվել է «Հայ վիպական ավանդությունը և քրդական բանահյուսությունը» ուսումնասիրությունը:

Համակարգելով հայ պատմագրության մեջ առկա (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Սեբեոս, Հովհան Մամիկոնյան) հին ավանդական բանահյուսության նմուշները՝ Ս. Հարությունյանը 1987 թ. Երևանում լույս է ընծայում «Հայ հին վիպաշխարհը» պատկերազարդ գիրքը, որն էլ 2007 թ. թարգմանվում է ռուսերեն:

Ս. Հարությունյանի ջանադիր աշխատանքի շնորհիվ հայ բանավոր ավանդության մեջ պահպանված առասպելաբանական նախաշերտերը դարձան մշակույթաբանական նոր քննության առարկա: 2000 թ. Բեյրութում հրատարակված և Համագգային կրթամշակութային հաստատության մրցանակին արժանացած «Հայ առասպելաբանություն» ծանրակշիռ մենագրությամբ Ս. Հարությունյանը հայագիտության մեջ ամբողջական ուսումնասիրության է ենթարկել հայ առասպելական գրույցների և հավատալիքների գրեթե ողջ համակարգը, դրանց փոխառնչություններն ու յուրահատկությունները, դրանք քննել հարևան ժողովուրդների ավանդական մշակույթների համատեքստում և հիմք դրել հայ առասպելաբանության գիտական նոր ուսմունքին: Սփյուռքահայ գրախոս Վ. Մատթեոսյանի կարծիքով, այս աշխատության մեջ «ներկայացրած հում նիւթի ճոխութիւնը, վերլուծումի տրամաբանութիւնը և գիտական հենքը բաւարար են զայն դասելու Մանուկ Աբեղեանի աշխատասիրութիւններու կողքին» («Կամ. հանդես վերլուծական», թիւ 5, Լոս Անճելըս, 2002, էջ 246-247): Ի դեպ, Պ. Սևակի դիտարկմամբ նույնպես «Ս. Հարությունյանը շարունակում է մեծն Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել»<sup>2</sup>:

Իսկ «Հայագիտության զարգացումը 1870-1917 թթ.» (Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1981, էջ 898-920) և «Հայ գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը V-VIII դարերում» (Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 439-474) մենագրական ակնարկներով նա համակարգված հետազոտության է ենթարկել նոր հայագիտական մտքի պատմական ընթացքը՝ իր տարբեր դրսևորումներով ու օրինաչափություններով:

1964 թ. Ս. Հարությունյանը մասնակցել է Մոսկվայում գումարված մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսին, Մոսկվայում, Լենինգրադում, Դուշանբեում, Պետրոզավոդսկում, Երևանում կայացած համամիութենական ավելի քան տասը գիտաժողովների, 1981 թ. Բուդապեշտում գումարված միջազգային սիմպոզիումին: 1989 թ. նա ընտրվել է Ֆինլանդիայում հիմնադրված Միջազգային գրուցագիտության ընկերակցության անդամ, 2001 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Վերջին տասը տարիների ընթացքում Ս. Հարությունյանը ղեկավարել է երկու մեծ թեմատիկ խմբեր, կազմակերպել ու ղեկավարել հինգ գիտական նստաշրջաններ, խմբագրել տասից ավելի գրքեր, մենագրություններ, գիտական նստաշրջանների զեկուցումների և հիմնադրությունների ժողովածուներ: Մեծ են Ս. Հարությունյանի ծառայությունները գիտակազմակերպչական աշխատանքների և մասնագետ պատրաստելու գործում. նրա անմիջական ղեկավարությամբ 1970-1980-ական թվականների ընթացքում գիտական նորագույն մեթոդներով

<sup>2</sup> Տե՛ս Ս. Հարությունյանի անձնական արխիվը:

մշակվել և համակարգվել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական հարուստ արխիվը, ինչպես նաև կազմվել է վերջինիս թվայնացված գլխավոր համացույցը:

Ս. Հարությունյանի ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ, շարունակվում է կադրերի պատրաստ-ման գործընթացը: Երկար տարիներ Ս. Հարությունյանը «Բանագիտություն», «Հայ առասպելաբանություն», «Հայ բանահյուսություն», «Հայ հին գրականություն» առարկաներն է դասավանդում Երևանի պետական համալսարանի պատմության և արևելագիտության ֆակուլտետներում և հանրապետության մյուս բուհերում:

Ս. Հարությունյանի լեզվին ու ոճին բնորոշ են ազգային մտակերտվածքի ու ժողովրդական բառուբանի համարձակ դրսևորումները, որոնք էլ իրենց հերթին յուրօրինակ նրբագիծ են հավելում մեծ գիտնականի ու անգուգական մարդու կերպարին:

Տարիների վաստակով ծանրաբեռնված գիտության մշակը տքնանքով շարունակում է բարձրանալ «իր լեռան ճանապարհը». առջևում անելիքներ կան ու չիրագործված ծրագրեր: Իսկ ճակատագրից Ս. Հարությունյանը շնորհակալ է՝ իրեն լիաբուռն տրված շնորհների և հատկապես հարագատ ժողովրդից ստացածը նրան վերադարձնելու կարողության համար:

**ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թ. Լ.**

Բանասիրական գիտությունների թեկնածու